ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Լրացավ բազմավաստակ գրականագետ, գրաքննադատ, գրական-հասարակական գործիչ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի ծննդյան 75-ամյակը: Իր ապրած երեք քառորդ դարի ավելի քան հինգ տասնամյակը անվանի գիտնականը նվիրել է ի վերուստ սահմանված կոչումին՝ հայ գրականագիտությունը հարստացնելու այնպիսի գիտական արժեքներով, որոնք դեռ շատ տասնամյակներ ուղենշային կլինեն գրականագետների ու քննադատների նորանոր սերունդների համար:

Հայտնի է, որ մեր դարի 50-ական թվականները շրջադարձային եղան հայ գրականության համար: Դրան նպաստեցին ոչ միայն հասարակական-քաղաքական բարեպատեհ հանգամանքները, այլև այն, որ դրան համընկավ բնականոն գիտական սերընդափոխության պահը: Միաժամանակ, հրապարակ եկավ երիտասարդ գրականագետների մի փայլուն համաստեղություն, որին վիճակված էր մի ամբողջ շրջափուլ նշանավորել մեր գրական մշակույթի պատմության մեջ: Այդ շարքում իր ինքնությունը ե ինքնատիպ տեղն ունի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը:

Դժվար է ամփոփել այն բոլոր գիտական բնագավառները, ուղղություններն ու հիմնախնդիրները, որոնք հետաքրքրել են ակադեմիկոս Սարինյանին, և ուր իր ծանրակշիռ խոսքն է ասել նա իր բազմամյա գիտական-ստեղծագործական գործունեության ընթացքում: Նրա նախասիրած ոլորտը հայ նոր գրականությունն է, մի ասպարեզ, որ գիտական վտրձաքսուր էր դարձել նաիտրդ սերնդի շատ մասնագետների համար: Դա լավ էր գիտակցում Սարինյան-գրականագետը, ուստի նրա յուրաքանչյուր գիտական ելույթ մի նոր թայլ էր դեպի առաջ, որ աշխույժ հետաքրքրություն էր առաջ բերում գիտական շրջաններում: Ուսանող էինք դեռ, երբ լույս տեսավ նրա "Ռաֆֆի" մենագրությունը, որ իսկապես նոր խոսք էր ռաֆֆիագիտության մեջ: Հետո ասպիրանտ էինք արդեն, երբ լույս աշխարհ եկավ «Հայկական ռոմանտիզմը», որ գիտական հարցադրումների լայնությամբ ու խորությամբ, ընդգրկումների աննախադեպ ընդարձակությամբ, մտքի ազատությամբ, շարադրանքի գիտական փայլով անմիջապես ընկալվեց

իբրև կոթողային երևույթ: Գիրքը արժանացավ այնպիսի մի դժվարահամ քննադատի բարձր ուշադրությանը, ինչպիսին Պարույր Սևակն էր:

Այնուհետև, իրար հաջորդեցին նորանոր մենագրություններ՝ նվիրված Մուրացանին, Լևոն Շանթին, գիտական փոքրածավալ ուսումնասիրությունների ու հոդվածների մի քանի ժողովածուներ, որոնք արդեն մեկընդմիշտ անվտխարինելի տեղ են ապահովել մեծարգո ակադեմիկոսի համար հայ մշակույթի պատմության մեջ:

Սերգեյ Սարինյանը նաև գիտության տաղանդավոր կազմակերպիչ է: Արդեն հինգերորդ տասնամյակն է, որ նա ղեկավարում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժինը: Այդ բաժնի գիտական արտադրանքով բնութագրվել է ինստիտուտի դեմքը: Այս բաժնում և ակադեմիկոս Սարինյանի անմիջական ղեկավարությամբ է իրականացվել հայ նոր գրականության պատմության բազմահատորյակը՝ 60-ական թվականների գրականագիտության մակարդակի համար գրեթե անհավատալի մի հանդգնություն, որին կարող էր դիմել միայն Սարինյանի նման գիտնականը: Այդ մտահղացումը փայլուն կերպով իրականացվեց մոտ երկու տասնամյակում՝ արժանանալով ոչ միայն գիտական շրջանների բարձր գնահատանքին, այլև Հայաստանի պետական մրցանակի: Պակաս նշանակալից երևույթ չէ նաև հայ քննադատության պատմության երկհատորյակը, որ իրականացվել է դարձյալ Սերգեյ Սարինյանի անմիջական ղեկավարությամբ ու խմբագրությամբ: Այժմ գիտական խմբում ստեղծվում է մի նոր հիմնարար կոլեկտիվ աշխատություն՝ հայ վեպի պատմության երկհատորյակը, որի առաջին հատորը արդեն պատրաստ է տպագրության:

Ակադեմիկոս Սարինյանի ղեկավարած բաժնում ստեղծվել են բազմաթիվ ուսումնասիրություններ՝ նվիրված մեր գրականագիտության հանգուցային խնդիրներին: Այդ մենագրությունների հեղինակներից շատերը հասել են գիտության թեկնածուի և դոկտորի աստիճանի: Ես ինքս իմ առաջին գիտական դպրոցն անցել եմ այդ բաժնում, որի համար երախտապարտ եմ:

Սերգեյ Սարինյանի գիտական նկարագրին հատուկ է շարժուն ու պրպտող միտքը, սուր դիտողականությունը, հարցադրումների փիլիսոփայական լայնությունն ու խորությունը: Նա ունի իր սեփական մտածելակերպը, իր անհատականությունն ու անկրկնելի դիմագիծը. սարինյանական բնագիրը երբեք չի կարելի շփոթել ուրիշի հետ: Այդպիսի ինքնահաստատման կարող են հասնել միայն եզակի անհատականությունները:

Սարինյանն իր խառնվածքով ակադեմիական գիտնական է: Բայց դա նրան երբևէ չի խանգարել մասնակցելու նաև ընթացիկ գրական կյանքին՝ իբրև գործուն և սկզբունքային քննադատ, ընդ որում՝ նրա գրեթե ոչ մի քննադատական ելույթ անարձագանք չի մնացել՝ հաճախ էլ հարուցելով արդյունավետ բանավեճեր: Այսօր էլ բազմավաստակ քննադատը շահախնդիր կրքով հետևում է գրական կյանքին՝ իր ծանրակշիռ ելույթներով օրինակ ծառայելով շատ ու շատ երիտասարդների:

Սերգեյ Սարինյանը մարդկային բարդ անհատականություն է, խոր, հակասական, արտաքնապես դժվարահաղորդ, բայց մոտիկից ճանաչողների, նրա հետ տևական շփում ունեցողների համար՝ ներքնապես զգացմունքային, բարի ու շուտ տպավորվող, որ կարող է հուզվել մի տաք բանաստեղծական տողով: Շատ երիտասարդներ են զգացել նրա պահանջկոտ

խոսքի զգաստացնող ուժը է այն անակնկալ մարդկային կամեցողությունը, որ ընդառաջել է նրանց վճռական պահերին:

Մեզ բոլորիս համար շատ հաճելի է տեսնել, որ ականավոր գիտնականը՝ կենսական ուժերով լի, շարունակում է իր եռանդուն գործունեությունը: Մաղթենք նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք ու ստեղծագործական կորով՝ հանուն մեր գիտության, մեր գրական մշակույթի բարգավաճման:

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր